**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

***1. Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը***

Արևիկ Անափիոսյան

***2. Զբաղեցրած Պաշտոն(ներ)ը***

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

***3. Գործուղման Վայրը և Ժամկետները***

Ստրասբուրգ, Ֆրանսիա հոկտեմբերի 15-17, 2019

***4. Հրավիրող Կողմը***

Եվրոպայի խորհրդի կրթության քաղաքականության և պրակտիկայի հարցերով ղեկավար կոմիտե

***5. Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)***

Եվրոպայի խորհրդի կենտրոնակայան Ստրասբուրգում տարեկան երկու անգամ տեղի են ունենում Եվրոպայի խորհրդի կրթության քաղաքականության և պրակտիկայի հարցերով ղեկավար կոմիտեի (CDPPE) նիստեր, և տարին 4 անգամ տվյալ կոմիտեի բյուրոյի նիստեր: Նշված կոմիտեում հանդիսանում եմ Հայաստանի Հանրապետության պաշտոնական ներկայացուցիչը, իսկ 2019թ. գարնանն ընտրվեցի նաև բյուրոյի անդամ: Նիստերի ընթացքում քննարկվում են եվրոպական կրթական տարածքին վերաբերող բազմաթիվ հարցեր, ինչպես նաև CDPPE-ի քարտուղարության կողմից ներկայացվում է նախորդ կատարողականի հաշվետվությունը:Գործուղման նպատակն էր մասնակցել Եվրոպայի խորհրդի

կրթության քաղաքականության և պրակտիկայի հարցերով ղեկավար կոմիտեի բյուրոյի 12-րդ նիստին:

Միևնույն ժամանակ Եվրոպայի խորհրդի հետ երկկողմ համագործակցության շրջանակներում ունենք մի քանի ծրագրեր, մասնավորապես հանրակրթության բարեփոխումների շրջանակներում և բարձրագույն կրթության և գիտության մասին օրենքի մշակման նպատակով: Երկկողմ համագործակցության շրջանակներում քննարկվել են ընթացիկ ծրագրերը և ձեռք են բերվել պայմանավորվածություններ նոր ծրագրերի ուղղությամբ:

***6. Քննարկված Թեմաները***

- Քարտուղարության կողմից քննարկվեց CDPPE- ն Ժողովրդավարական մշակույթի իրավասությունների շրջանակի շարունակական զարգացման (RFCDC) տեղեկացման և միջազգային մակարդակում RFCDC-ի արդյունավետ իրականացման ուղղությամբ ձեռնարկված քայլերը, որտեղ նշվեց, որ անդամ պետություններում այն իրականացնելու համար կարևոր պայման է տարբեր լեզուներով RFCDC փաստաթղթերի առկայությունը: Նշենք, որ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության դիմումի փաստաթուղթը պաշտոնապես թարգմանվում է նաև հայերեն:
- Ներկայացվեց նաև CDPPE ուսումնական պլանի, դասավանդման և գնահատման վերաբերյալ ուսումնական քաղաքականության խորհրդատուների ցանցի (EPAN) աշխատանքային խմբերի արդյունքները: Կոմիտեի կողմից առաջարկ ներկվեց կարևորել կրթության քաղաքականության խորհրդատուների ցանցի շարունակական աշխատանքը, աջակցել նրանց կողմից ձեռնարկված գործողություններին: Այս նպատակով, շուտով վերանայվելու է աշխատանքային

խմբի մանդատը և անդամ պետությունները կկարողանան վերահաստատել իրենց նշանակումները կամ ներկայացնել խմբի նոր անդամներ:

- Ընդգծվեց EPAN- ի դերի հետագա զարգացման կարևորությունը ազգային / տարածաշրջանային մակարդակում RFCDC- ի իրականացման գործում և «Դեմոկրատական դպրոցների ցանցի» կայուն զարգացման գործում:
- Ներկայացվեց նաև «Ազատ խոսել, անվտանգ սովորել. Ժողովրդավարական դպրոցներ բոլորի համար» նախագիծը: Մեր կողմից առաջարկվեց անդամ պետությունների համաձայնությունը ձեռք բերել և ընդլայնել նախագծին միացող հանրակրթական դպրոցների ցանցը:
- Ներկայացվեց նաև 2019 թ. նոյեմբերի 14-15-ը Ֆլորենցիայում կայանալիք «Գործողությունների իրավասությունները» առաջիկա գիտաժողովը, որը կնպաստի RFCDC- ի իրականացմանը և «Դեմոկրատական դպրոցների ցանցի» հետագա զարգացմանը:

## *7. Հանդիպումները, Ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Նիստին հրավիրված էին Բյուրոյի անդամ 4 պետությունների բարձրաստիճան պաշտոնյաներ և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, այդ թվում քարտուղարությունից, որոնք իրականացնում են հանրակրթության և բարձրագույն կրթության պլանավորումը և քաղաքականության կիրառումը ԵԽ-ում: Նիստերի ընթացքում քննարկվեցին նաև Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում միգրացիոն քաղաքականության միտումներին առնչվող հիմնախնդիրները:

Երկկողմ ձևաչափով հանդիպումներ են տեղի ունեցել ԵԽ մի քանի ներկայացուցիչների հետ, որտեղ քննարկվել են ընթացիկ ծրագրերը և նախագծվել են նորերը:

***8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:***

2019 թ. սեպտեմբերի 11-ի 1353-րդ նիստի ընթացքում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն հիմնեց Արհեստական բանականության ժամանակավոր կոմիտեն /CAHAI/, որի կարգավորման ոլորտը օրենքի գերակայությունն է, իսկ ծրագիրը՝ տեղեկատվական հասարակություն և ինտերնետ կառավարումը: Հիմնվելով Եվրոպայի Խորհրդի մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության չափորոշիչների վրա՝ բյուրոն և կոմիտեն կուսումնասիրեն արհեստական բանականության զարգացման, ձևավորման և կիրառման իրավական շրջանակների իրագործելիությունը և հիմնական տարրերը:

Եվրոպայի խորհրդի ղեկավար հանձնաժողովին առաջարկվեց նշանակել ներկայացուցիչներ, որոնք պատասխանատու են արհեստական բանականության ոլորտի համար, CAHAI- ի հանդիպումներին մասնակցելու նպատակով: Առաջարկվել նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալի թեկնածությունը այդ հանձնաժողովում, սակայն աշխատանքային զբաղվածության պատճառով հաստատել չստացվեց:

Երկկողմ ձևաչափով որոշվեց համագործակցությունը շարունակել ուսուցիչների վերապատրաստման համակարգի ներդրման ուղղությամբ, ինչպես նաև RFCDC-ի մասին ուսուցիչների վերապատրաստման մոդուլի մշակման ուղղությամբ:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը. ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Ուսուցիչների վերապատրաստման մոդուլի մշակման և ներդրման նպատակով որոշվեց աշխատանքային քննարկումներ իրականացնել նոյեմբեր ամսին և սկսել աշխատանքները 2020թ. հունվարին:

Բյուրոյի շրջանակներում, որոշվեց մյուս նիստն անցկացնել 2020թ. Մարտի 18-20-ը:

***10. Ստորագրությունը, ամսաթիվը***

22"10"2019

Recoverable Signature

X

ԱՐԵՎԻԿ ԱՆԱՓԻՈՍՅԱՆ

Signed by: ANAPIOSYAN AREVIK 6905860212